

Փիլոն Ալեքսանդրացիի համաձայն, մենք (մարդիկ), թեև ի վիճակի չենք եւ չենք կրնար գԱստուած, որպէս «Ինքնին Գոյ» ընկալել, բայց կրնանք անոր ուժը (յուն.՝ *dynameis*) ընկալել, որ կը բացայայտուի Սբ. Գիրքի Հնգամատեանի «Տէր» (յուն.՝ *kýrios*, լատ.՝ *dominus*) արտայայտութեան մէջ:

Փիլոն նաեւ այդ ուժը կը ներկայացնէ որպէս երեք ուժեր, նկատի ունենալով՝ «Աստուծոյ Բարին», «Աստուծոյ Հեղինակութիւնը», որոնց կապը կ'ամրապնդուի երրորդ ուժով մը, որ «Աստուծոյ Բանն» է: Փիլոն յիշեալ երեք ուժերը «Երեքութիւն» կը կոչէ: Այս գաղափարը, հետագային պիտի տեսնենք նաեւ Քրիստոնէական կրօնի մէջ, ուր միակ Աստուծոյ երեք անձերը՝ «Հայրը», «Որդին» եւ «Հոգին» կը կազմեն անբաժանելի «Երրորդութիւն» մը:

Փիլոն յատկապէս կը կարեւորէ «Բանը»³⁸ (յուն.՝ *lógos*), որպէս Աստուծոյ կերպը կամ պատկերը, որ կը բնակի Աստուծոյ մէջ եւ առնչուած է արարուած աշխարհին: Փիլոն երբեմն նոյնիսկ Բանը կը կոչէ «Երկրորդ Աստուած» (յուն.՝ *deuteros theós*) կամ «Որդի Աստուծոյ» (յուն.՝ *hyios theós*): Եթէ մենք (մարդիկ) առաջին Աստուածը չենք կրնար ճանչնալ, սակայն Աստուածային Բանը կրնանք ճանչնալ՝ մեր իմացականութեան ուժով:

Նոր Կտակարանի Յովհաննու Աւետարանի (Աւետարան ըստ Յովհաննու, Joh. 1/1-3) սկիզբն ալ, մեծ կարեւորութեամբ կը յիշուի «Բանը»³⁹ (յուն.՝ *lógos*), որ Յիսուս Քրիստոսը մատնանշող ակնարկութիւն մըն է :

Քրիստոնէական բացատրութեամբ, Աստուծոյ Որդւոյն (Յիսուս Քրիստոսի) ակնարկելով, Յովհաննու Աւետարանին մէջ (Joh. 1/14) կը կարդանք նաեւ, որ «Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ»: Այլ խօսքով «Բանը» նոյնիսկ Աստուծոյ Որդի՝ Յիսուս Քրիստոսն է, որ մարմնացաւ եւ մարդոց հետ բնակեցաւ:

Փիլոն եւս, ինչպէս վերը նշեցինք, «Բանը» կը կոչէ նաեւ «Որդի Աստուծոյ», անշուշտ առանց ակնարկելու Քրիստոնէութեան հիմնադիր Յիսուս Քրիստոսին:

38 «Բանը» (յուն.՝ „*logos*“,):-

Ինչպէս յունարէնի, նոյնպէս հայերէնի մէջ «Բանը» բազմիմաստ հասկացութիւն է: Կը նշանակէ բառ, խօսք, լեզու, ուսմունք, մտաւոր կարողութիւն ու անոր արդիւնքը՝ միտք, գաղափար: Քրիստոնէութեան մէջ՝ աստուածային երրորդութեան երկրորդ անձը (Յիսուս Քրիստոս): «Բան»ով կազմուած բազմաթիւ բառերէն յիշենք՝ բանգետ, բանախօս, բանաստեղծ, բանիմաց, բանավէճ, բանականութիւն, բանասիրութիւն, բանահիւսութիւն, բանաստեղծութիւն, եւայլն: Անգլ. „-logy“, հայ.՝ «-բանութիւն» վերջացող բազմաթիւ բառերէն՝ հոգեբանութիւն (Psychology), սրտաբանութիւն (Cardiology), նմանաբանութիւն (Analogy), եզրաբանութիւն (Terminology), աստուածաբանութիւն (Theology), եւայլն...:

39 «Բանը» (յուն.՝ *logos*).:-

«Սկիզբէն Էր Բանը ու Բանը Աստուծոյ քով Էր եւ Բանը Աստուած Էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ Էր: Ամէն բան անով եղաւ եւ առանց անոր բան մը չեղաւ...» (Աւետարան ըստ Յովհաննու, Joh. 1/1-3)